evocaBANK

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Կոդ TRM15-0004-06/4 PUB	Խմբագրություն 12
Կազմեց	Հաստատված
Մեթոդաբանության և որակի կառավարման բաժնի պետ՝ Ա. Դալլաքյան	Վարչության 01/06/2018թ. թիվ 23 արձանագրություն Վարչության նախագահ՝ Է.Սողոմոնյան_____ **Ուժի մեջ է՝ 05/06/2018թ.- ից**

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) իրականացնում է իրավաբանական և ֆիզիկական անձանցից (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ) ժամկետային ավանդների (այսուհետ՝ Ավանդ) ներգրավում:

1.2. Ավանդները ներգրավվում են՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով:

1.3. Ավանդները ընդունվում են ինչպես կանխիկ այնպես էլ անկանխիկ եղանակով: Ավանդների դիմաց հաշվեգրվող տոկոսագումարների վճարումն իրականացվում է ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:

1.4. Ավանդների հետ կապված կանխիկ գործառնությունների միջնորդավճարները սահմանվում են Բանկի «Սակագներով և դրույքներով» (TRM14-0002-02/1), բացառությամբ ՌԴ ռուբլով ավանդների: Կանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը վերադարձվում է կանխիկ ՌԴ ռուբլով, իսկ անկանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը վերադարձվում է անկանխիկ ՌԴ ռուբլով՝ առանց միջնորդավճարների գանձման: Անկանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը կանխիկ ՌԴ ռուբլով վերադարձնելու դեպքում, գանձվում է վերադարձման օրը ՌԴ ռուբլու կանխիկացման համար սահմանված միջնորդավճարը: Կանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը անկանխիկ ՌԴ ռուբլով վերադարձնելու դեպքում գանձվում է վերադարձման օրը կանխիկ ՌԴ ռուբլու մուտքագրման համար սահմանված միջնորդավճարը:

1.5. Արտարժույթով ներդրված ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսագումարները ավանդատուի ցանկությամբ կարող են վճարվել այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը, ինչպես նաև ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով վճարման օրը տվյալ արտարժույթի համար Բանկի կողմից սահմանված անկանխիկ առքի փոխարժեքը:

1.6. 25,000,000 ՀՀ դրամից, 50,000 ԱՄՆ դոլարից, 40,000 Եվրոյից և 3,000,000 ՌԴ ռուբլուց ավել գումար ներդնելու դեպքում սահմանվում են պայմանագրային տոկոսադրույքներ:

1.7. Ավանդատուն կարող է իր ներդրված ավանդի 90% չափով ստանալ վարկ կամ օվերդրաֆտ՝ իր ժամկետային ավանդի ապահովվածությամբ (բացառությամբ ՌԴ ռուբլով ներդրված ավանդների): Վարկը կամ օվերդրաֆտը տրամադրվում է ներդրված ավանդի արժույթով՝ ավանդի տոկոսադրույք գումարած 2 % տարեկան տոկոսադրույքով: Վարկը կամ օվերդրաֆտը պետք է ամբողջությամբ մարվի մինչև ժամկետային ավանդի պայմանագրի ժամկետի ավարտը:

2. Բանկի կողմից ընդունվող Ավանդների տեսակները և պայմանները՝

2.1. Դասական՝ տոկոսագումարները ժամկետի վերջում վճարմամբ

Ներգրավվող գումարների սահմանաչափեր ըստ արժույթի	Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների				
	91 - 180 օր	181 - 365 օր	366 -545 օր	546 - 730 օր	731 - 1095 օր
200,000 - 25,000,000 ՀՀ դրամ	6 %	8 %	9,5 %	10 %	10,5 %
500 - 50,000 ԱՄՆ դոլար	2 %	3 %	4,5 %	5 %	5,5 %
500 - 40,000 Եվրո	1 %	1,5 %	2,5 %	3 %	3,5 %
30,000 - 3,000,000 ՌԴ ռուբլի	6 %	6,5 %	7 %	–	–

2.1.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից:

2.1.2. Տոկոսագումարների պարբերաբար (ամենամսյա, եռամսյակային, կիսամյակային, տարեկան) վճարման դեպքում սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք:

2.1.3. Ավանդատուն կարող է համալրել (ավելացնել) իր Ավանդի գումարը՝ սկսած նվազագույնը 200.000 ՀՀ դրամից, 500 ԱՄՆ դոլարից, 500 Եվրոյից կամ 30,000 ՌԴ ռուբլուց: Ավելացման հնարավորությամբ ավանդ ներդնելու դեպքում կկիրառվի վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք: Կատարված բոլոր համալրումների հանրագումարը չի կարող գերազանցել Ավանդի ներդրման սկզբնական գումարը: Ավանդային

պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:

2.1.4. Ավանդատուի պահանջով Ավանդի գումարը պայմանագրով սահմանված ժամկետից շուտ վերադարձնելու դեպքում, Բանկը իրականացնում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ հետևյալ կերպ՝

- ՀՀ դրամով Ավանդների դեպքում՝ 0,5 % տարեկան տոկոսադրույքի կիրառմամբ:
- ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով Ավանդների դեպքում՝ 0,1 % տարեկան տոկոսադրույքի կիրառմամբ:

2.1.5. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:

2.2. Մանկական ավանդ

Ներգրավվող գումարների սահմանաչափեր ըստ արժույթի	Տարեկան տոկոսադրույք
100,000 - 25,000,000 ՀՀ դրամ	9.5 %
250 - 50,000 ԱՄՆ դոլար	4,5 %

2.2.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական անձանցից, երեխաների անունով Ավանդ ներդնելու պայմանով՝ 2 տարուց մինչև երեխայի 18 տարին լրանալը:

2.2.2. Տոկոսագումարների վճարումը կամ կապիտալացումը իրականացվում է ամենամյա պարբերականությամբ:

2.2.3. Ավանդատուն կարող է համալրել (ավելացնել) իր Ավանդի գումարը՝ սկսած նվազագույնը 40,000 ՀՀ դրամից կամ 100 ԱՄՆ դոլարից: Մեկ ամսվա ընթացքում համալրումների ընդհանուր գումարը 5,000,000 ՀՀ դրամը կամ 10,000 ԱՄՆ դոլարը գերազանցելու դեպքում անհրաժեշտ է Բանկի Վարչության որոշումը: Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:

2.2.4. Կնքման օրից սկսած 2 տարվա ընթացքում պայմանագիրը դադարեցնելու դեպքում իրականացվում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ ՀՀ դրամ՝ 0,5%, ԱՄՆ դոլար՝ 0.1% տարեկան տոկոսադրույքով: 2 տարին լրանալուց հետո պահպանվում են մինչև վերջին կապիտալացումը (վճարումը) հաշվարկված տոկոսագումարները, իսկ կապիտալացումից (վճարումից) հետո ընկած ժամանակահատվածի համար կատարվում է տոկոսագումարների վերահաշվարկ ՀՀ դրամ՝ 0,5%, ԱՄՆ դոլար՝ 0.1% տարեկան տոկոսադրույքով:

2.2.5. Պայմանագրի կնքման օրվանից 2 տարի հետո և այնուհետև յուրաքանչյուր հաջորդ տարի Ավանդի տոկոսադրույքը վերանայվում է՝ հիմք ընդունելով վերանայման պահին Բանկում գործող «Դասական» Ավանդատեսակի 366 օր ժամկետի համար սահմանված համապատասխան արժույթի տոկոսադրույքը:

2.2.6. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:

2.3. Ավանդ «Էվոկա Online»

2.3.1. **«Էվոկա Online» տոկոսագումարները ժամկետի վերջում վճարմամբ**

Ներգրավվող գումարների սահմանաչափեր ըստ արժույթի	Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների				
	91 - 180 օր	181 - 365 օր	366 -545 օր	546 - 730 օր	731 - 1095 օր
100,000 - 25,000,000 ՀՀ դրամ	6 %	8 %	9,75 %	10,25 %	10,75 %
200 - 50,000 ԱՄՆ դոլար	2 %	3 %	4,75 %	5,25%	5,75 %
200 - 40,000 Եվրո	1 %	1,5 %	2,75 %	3,25 %	3,75 %
30,000 - 3,000,000 ՌԴ ռուբլի	6 %	6,5 %	7.25 %	–	–

2.3.2. Ավանդն ընդունվում է ֆիզիկական անձանցից **բացառապես** «EvocaTouch» կամ «EvocaOnline» հեռակառավարման համակարգերի միջոցով:

2.3.3. Տոկոսագումարների պարբերաբար (ամենամսյա, եռամսյակային, կիսամյակային, տարեկան) վճարման դեպքում կկիրառվի վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք:

2.3.4. Ավելացման հնարավորությամբ ավանդ ներդնելու դեպքում կկիրառվի վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք: Տվյալ դեպքում ավանդի համալրումները իրականացվում են **բացառապես** EvocaTouch» կամ «EvocaOnline» հեռակառավարման համակարգերի միջոցով: Ավանդատուն կարող է համալրել (ավելացնել) իր Ավանդի գումարը՝ առանց համալրվող գումարի նվազագույն սահմանափակման: Կատարված բոլոր համալրումների հանրագումարը չի կարող գերազանցել ՝

- ՀՀ դրամի դեպքում՝ Ավանդի ներդրման սկզբնական գումարի կրկնապատիկը,
- ԱՄՆ դոլարի, Եվրոյի և ՌԴ ռուբլու դեպքում, Ավանդի ներդրման սկզբնական գումարը:

2.3.5. Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:

2.3.6. Ավանդատուի պահանջով Ավանդի գումարը պայմանագրով սահմանված ժամկետից շուտ վերադարձնելու դեպքում, Բանկը իրականացնում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ հետևյալ կերպ՝

- ՀՀ դրամով Ավանդների դեպքում՝ 0,5 % տարեկան տոկոսադրույքի կիրառմամբ:
- ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով Ավանդների դեպքում՝ 0,1 % տարեկան տոկոսադրույքի կիրառմամբ:

2.3.7. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:

3. Լրացուցիչ պայմաններ՝

3.1. Ավանդատուի ցանկության դեպքում, Բանկը կարող է տրամադրել վճարային քարտ առանց տարեկան սպասարկման վճարի գանձման:

3.2. Տրամադրվող վճարային քարտի տեսակները ըստ ներդրվող ավանդի գումարի սահմանվում է ստորև.

Ավանդի արժույթ/Քարտի տեսակ	**Maestro**	**MasterCard Standart/ Visa Classic**	**MasterCard Gold/Visa Gold**
ՀՀ դրամ	մինչև 5.000.000	5.000.001 – 25.000.000	25.000.001 և ավել
ԱՄՆ դոլար	մինչև 10.000	10.001 - 50.000	50.001 և ավել
Եվրո	մինչև 10.000	10.001 – 40.000	40.001 և ավել
ՌԴ ռուբլի	մինչև 600.000	600.001 – 3.000.000	3.000.001 և ավել